Ինչու՞ ընտրել մեզ՝ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն իր գործունեությունը ծավալում է ավելի քան 24 տարի և ապահովագրական շուկայում ունի իր կայուն դիրքը: Ընկերության հաջողության գրավականը մասնագիտական բարձր որակավորում ունեցող անձանցից կազմված թիմն է և թիմի ներսում տիրող դրական մթնոլորտը: Ընդառաջ գնալով ժամանակի մարտահրավերներին՝ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ–ն իր թիմակիցների համար մշտապես ստեղծում է աշխատանքային բարենպաստ պայմաններ՝ ժամանակ առ ժամանակ տարբեր բնույթի բենեֆիթներ տրամադրելով:

Պաշտոնը՝ Բժիշկ փորձագետ - Ընկերությունը փնտրում է խելացի, բանիմաց, բժշկական բարձր գիտելիքներ, միաժամանակ սովորելու և աճելու ձգտում ունեցող անձի, ով կզբաղեցնի Ընկերությունում առկա բժիշկ փորձագետի թափուր հաստիքը:

Վարչություն՝ Անձնական ապահովագրության հայցերի վարչություն

Տարածաշրջան՝ ՀՀ, ք. Երևան, Արամի 3 և 5

Կրթություն/Որակավորում՝ Օրդինատորի աստիճան, բակալավրի աստիճանը պարտադիր

Բուժական գործ, Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան

Պահանջներ՝

- Microsoft Word Document և Microsoft Excel Worksheet ծրագրերի իմացություն,
- Հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուների իմացություն,
- Թիմում աշխատելու կարողություն,
- Լարված իրավիճակներում արագ կողմնորոշվելու ունակություն,
- Մտքերը գրագետ, հստակ արտահայտելու կարողություն,
- Պատասխանատվության զգացում:

Աշխատանքային գրաֆիկ՝ Լրիվ աշխատանքային օր՝ 09:00-18:00

Պարտականություններ՝

- Առողջության ապահովագրության գծով և սոցիալական փաթեթի շահառուների պայմանագրի մասով հայտերի ընդունում, հաճախորդներին մասնագիտական խորհրդատվության տրամադրում,
- Բժշկական հաստատություններից ներկայացված հարցումներում բժշկական նշանակումների ճշգրտության և դրանց՝ արդի չափորոշիչներին համապատասխանության ստուգում,
- Ներկայացված հարցումներին և հայտերին առնչվող փաստաթղթերի փաթեթի ուսումնասիրություն և մասնագիտական եզրակացության տրամադրում, հատուցում տրամադրելու կամ մերժելու վերաբերյալ որոշման կայացում,
- ԱՊՊԱ անձնական վնասների վերաբերյալ հայտերի ընդունում, կանխավճարների հաստատում բժշկական հաստատություններին, պատճառված անձնական վնասների՝ վթարի հետ պատճառահետևանքային կապի առկայության ստուգում, գնահատում, հատուցում տրամադրելու կամ մերժելու վերաբերյալ որոշումների կայացում,
- Դժբախտ պատահարների ապահովագրության, Աջակցության ապահովագրության գծով ներկայացված հայտերի ընդունում, ուսումնասիրություն, հատուցում տրամադրելու կամ մերժելու վերաբերյալ որոշումների կայացում,

- Ապահովագրված անձանց հետ՝ բժշկական և ապահովագրական թեմաներով պարբերաբար կազմակերպվող հանդիպումներին մասնակցություն,
- Հաճախորդների բուժսպասարկման արդյունավետությունը բարձրացնելու հետ կապված աշխատանքների իրականացում, անհրաժեշտ փոփոխությունների նախաձեռնություն,
- Անմիջական ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարությունների կատարում:

Ընտրելով մեզ ի՞նչ արտոնություններ և հնարավորություններ կստանաք Դուք.

- Առողջության ապահովագրության փաթեթ,
- Ընտանիքի անդամներին ապահովագրելու հնարավորություն,
- Տարեկան տրամադրվող վարձատրվող Day off–երի և Time off-երի հնարավորություն,
- Ընկերության կողմից սպասարկվող Visa Classic քարտ,
- Ծննդյան և նախատոնական օրերին աշխատանքը շուտ ավարտելու հնարավորություն,
- Ընկերության ներսում դասընթացների կազմակերպում, մասնագիտական փորձի փոխանակման մշակույթի առկայություն,
- Պարբերաբար թիմի որակավորման բարձրացմանն ուղղված սեմինարների կազմակերպում,
- Սոցիալ–մշակութային բնույթի միջոցառումների, թիմային հավաքույթների, կորպորատիվների կազմակերպում:

Անհրաժեշտ փաստաթղթեր և դիմելու կարգը՝

Եթե համապատասխանում եք մեր պահանջներին և ցանկանում եք համագործակցել մեզ հետ, կարող եք Ձեր ինքնակենսագրականն ուղարկել **hr@silinsurance.net** էլեկտրոնային հասցեին (թեմա դաշտում պարտադիր նշել պաշտոնի անվանումը):

Վերջնաժամկետ՝ 15.04.2024թ.: